39199.092
Ø-345

Հ. ՄԿՐՏՉՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐՅԱՆ

ՊԵՏՀՐԱՏ

891.9
Մ-80

Հ. ՄԿՐՏՉՅԱՆ

-6 NOV 2011

891.99.092
Ծ-345

Կ.

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐՅԱՆ

(ԳՐԱԿԱՆ--ՔՆՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1938

03.07.2013

ՀՍՍՀ-ССР
40
34

1

Ալեքսանդր Ծատուրյանը մեկն է այն տաղանդավոր բանաստեղծներից, վորոնք 19-րդ դարի վերջին քառորդում ստեղծեցին հայ նոր պոեզիան։ Պատմական-գրական վճռական մի շրջադարձ եր դա մեր գրականության մեջ։ Դա ռեալիզմի հաղթանակն եր պոեզիայի մեջ, վորին զուգակցում եր նաև ռեալիզմի հաղթարշավը վիպագրության և դրամատուրգիայի ասպարիզում։ Անցյալ դարի 90-ական թվականներն այդ տեսակետից հայ պոեզիայի զարգացման գործում վճռական դեր խաղացին։ Հրապարակ իջան ու ձևավորվեցին մի շարք նշանավոր դեմքեր, մանավանդ մեր դեմոկրատական գրականության մեջ։

Ալեքսանդր Ծատուրյանն ապրել է չարքաշ ու տառապալից մի կյանք։ Պաշտոնական մամուլի՝ պոետին ցույց տված թշնամանքի պատճառով շատ քիչ նյութեր կան նրա կյանքի ու գրական գործունեության մասին։ Միակ աշխատությունը, վորի մեջ պատկերված է այս ուշագրավ անձնավորության կյանքը՝ բանաստեղծ Վ. Տերյանի կազմած կենսագրականն է։ Ապա Ծատուրյանի ինքնակենսագրությունը, վոր տպագրվել է «Մշակ»-ում բանաստեղծի մահից հետո։ Սակայն հենց այդ ժլատ ակնարկների մեջ պարզ յերևում է բանաստեղծի կյանքի տխուր եպոպեան, վորը մեղադրական մի ակտ է բուրժուական հասարակության դեմ։

Ալեքսանդր Ծատուրյանը ծնվել է 1865 թվականին Զաքաթալայում, մի չքավոր ընտանիքում։ Նրա հայրը գործակատար եր տեղական հարուստ ձկնավաճառ Սաֆարյանի առևտրական գործում։ Հայտնի չէ, թե ինչ պատճառով աղան պաշտոնից զրկում է պոետի հորը, վոր շատ չանցած մեռնում է՝ թողնելով կնոջն ու փոքրիկ Սանդրոյին ծայրահեղ չքավորության մեջ։ «Հերդ վոր մեռավ, բարձի տակը ոխտը կապեկ սև փող կար»—պատմում է Ծատուրյանի մայրն իր վորդուն։

Բանաստեղծի մանկությունն ու պատանեկությունն անցել է ծայրահեղ աղքատության մեջ։ «Մորս հետ ապրում էինք կիսախարխուլ տնակում. շարաթը մի անգամ հաղիվ էր մեր բուխարին կրակի յերես տեսնում, ման էի գալիս վոտաբոբիկ, տաք կերակուր միայն կիրակի որերն էինք ուտում»—պատմում է Ծատուրյանն իր կենսագրության մեջ։

Մայրական ջերմ սիրով կապված լինելով իր վորդու հետ, պոետի մայրն ամեն կերպ աշխատել է վորդուն ուսման տալ, թեև ինքը, ինչպես վկայում է բանաստեղծը, անուսում և անգրագետ է յեղել։

«Միակ լուսավոր շերտը իմ մանկական կյանքում յեղել է մորս անորինակ սերը դեպի ինձ։ Մայրս կար ու լվացք անելով էր պահում, մեծացնում ինձ, և թեպետ ինքն անուսում, նույնիսկ անգրագետ, բայց մի զարմանալի բնազդով ջերմ փափագում էր, վոր յես անպատճառ ուսում ստանամ»։

Պոետն իր մոր հիշատակին նվիրել է մի շարք բանաստեղծություններ, վորոնց մեջ վերարտադրել է իր մոր խոր լիրիկական նկարագիր ունեցող պատկերը։

Սուրբ հիշատակիդ, մա՛յր իմ նազելի,
Ցես անկեղծ յերգրս բերում եմ պարգև.
Թո՛ղ տեսուք շիրմիդ նա տնջնջելի
Լինի զարդարուն կոթող նարտեն...

Ալ. Ծատուրյանի «Մայրը» (վորբի հիշատակարանից) և բազմաթիվ այլ բանաստեղծություններ կենսագրական նշանակություն ունեն։ Այդ քնարական ստեղծագործությունների մեջ բանաստեղծը յերգում է իր տառապալից կյանքի տխուր պատմությունը և վառ լիրիզմով արտահայտում է իր անսահման սերն ու վիշտը.

Մայր ունեցի, մայր նազելի,
Մի փափկասիրտ տարած.
Բուրգն սիրով նորան եր
Սիրտ ու հոգիս նվիրած։

Ալեքսանդր Ծատուրյանն սկզբում սովորում է մի կույսի մոտ, վոր դասավանդում էր Տերթոդիկյան դպրոցի մեթոդներով։ 8-9 տարեկան հասակում փոքրիկ Ալեքսանդրն արդեն յեկեղեցում սպասավորություն էր անում, իսկ 12 տարեկան հասակում նա մտավ պետական ծառայության մեջ տեղական հեռագրատանը։ Նրա մայրն աշխատում էր հեռագրատան կառավարչի տանը, իսկ ինքը հեռագրեր էր ցրում։ Յերկուսը միասին չորս ռուբլի ռոճիկ էին ստանում։ Ալեքսանդր Ծատուրյանի հայրն ու մայրը վրացախոս հայեր էին։ Ծատուրյանը հայերենին տիրապետում է ծխական դպրոցում։ Նրա ուսուցիչը հայտնի գյուղագիր Արշակ Ադապյանն էր, վոր առաջինը պոետի հոգում սեր զարթեցրեց դեպի գրականությունը։ Արշակ Ադապյանի ոգնությամբ Ծատուրյանն ավարտեց ծխական դպրոցը և նրա խորհրդով ու աջակցությամբ ընդունվեց քաղաքային յեռադասյան դպրոցն՝ ուսումը շարունակելու։ Դպրոցական տարիները յեղել են բանաստեղծի կյանքի ծանր տարիները։ Նա ստիպված էր և՛ աշխատել, և՛ դասեր պատրաստել, դասամիջոցին թողնել դպրոցն ու վազել հեռագրատուն՝ հեռագրերը ցրելու և ապա դնալ մոր մոտ, նրա աշխատանքի վայրը աղքատիկ նախաճաշ անելու։ Բայց այդ «յերջանկությունն» ել յերկարատև չեղավ։ 1881 թվականին վախճանվեց բանաստեղծի մայրը և նա մնաց մենն մենակ ու անոգնական։ Մինչև կյանքի վերջը պոետը մեծագույն վշտով և հիշում իր անվերադարձ կորուստը.

Պատահե՞լ ե ձեզ արդյոք գեր մի ժամ
Տեսնել ձեր շուրջը լուռ ամայություն.
Զգալ ձեզ մենակ, ասեր, անխրնամ,
Լացի մեջ միայն գտնել փրկություն...

Մոր մահից հետո Ալեքսանդր Ծատուրյանը մնաց վորբ ու անխնամ։ Նրա ապավենը մնաց նորից գյուղագիր Արշակ Ադապյանը, վոր յերևի զգում էր պոետի ընդունակությունները և իր սրտին չափազանց մոտ էր ընդունում նրա խնամքի ու կրթության գործը։

Արշակ Ադապյանը հյուրընկալում է վորբ պատանուն, բայց իրենից և իր ուսուցչից անկախ պատճառներով Ծատուրյանը հարկադրված էր թողնել Ադապյանի բնակարանը։ Նա սկզբում ապրում է մի հայ խանութպանի մթերանոցում, ապա ստիպված է լինում թողնել մթերանոցը և գիշերում է տրակտիրում, ապա սափրիչի խանութում, վորպես պահապան և հաղիվ է դատաքննությունից ազատվում՝ իր անզգուշությունից առաջացած հրդե-

հի պատճառով։ Դպրոցն ավարտելուց հետո սկսվում է բանաստեղծի թափառական կյանքը։ Նորից Արշակ Ադապյանի խորհրդով ու նրա հետ միասին Ալեքսանդր Ծատուրյանն ուղեվորվում է Թբիլիսի՝ ուսումը շարունակելու։ Թափառական պատանին չի հյուրընկալվում և վոչ մի տեղ, նրա յերեսին փակվում են բոլոր դպրոցների դռները։

«Փորձում եմ մտնել Թիֆլիսի Ալեքսանդրյան ուսուցչական ինստիտուտը՝ չի հաջողվում, բաղխում եմ Ներսիսյան դպրոցի դուռը՝ վորդեգիր չեն ընդունում»։

Բանաստեղծին մերժում են նաև Գևորգյան ճեմարանում։ Յերկար թափառումներից հետո Ծատուրյանին հաջողվում է վերջիվերջո ընդունվել Թբիլիսիի արհեստավորաց դպրոցը, ուր նա 5 ռուբլի թոշակ է ստանում Բարեգործական Ընկերությունից և 5 ռուբլի ել մի մասնավոր մարդուց։ Դպրոցում նա սովորում է փականագործություն, բայց հիվանդության պատճառով ստիպված է լինում հեռանալ դպրոցից։ «Դուքնի աշակերտ» մթերավաճառի մոտ, 40 կոպեկ որավարձով քար ջարդող՝ ճանապարհի վրա, մարկիտանտ, լաթավաճառ, դաստիարակ և հայ լեզվի ուսուցիչ Նիժնի-Նովգորոդի մի հայ ընտանիքում, բանկային ծառայող, գործակատար մի հայ վաճառականի գրասենյակում։ Ահա բանաստեղծի թափառական կյանքի ուրվագիծը։

«Հացի խնդիրը մի կողմից, ուսման ազարդյուն փափագը մյուս կողմից, վոչ մի բոպե հանգիստ չեն տվել ինձ...»

Ծատուրյանին ուրվականի պես հալածել են հացի խնդիրը և ուսման ծարավը, բայց մինչև կյանքի վերջը նա չհասավ վոչ մեկին և վոչ մյուսին։ Նա չկարողացավ բարձրագույն կրթություն ստանալ, վոր նրա կյանքի գլխավոր նպատակներից մեկն եր, և նրա պոետական ինքնատիպ տաղանդը զարգացավ գերազանցապես քրանաջան ինքնակրթության շնորհիվ։ Սակայն այդ կյանքն և վիճակվել համարյա հայ հին գրողների մի նշանակալից մասին, մանավանդ նրա դեմոկրատական ներկայացուցիչներին։ Հայտնի յե, վոր նշանավոր դեմոկրատ յերգիծաբան Հակոբ Պարոնյանը մեռավ կիսաքաղց վիճակում, ականավոր քնարերգու Պետրոս Դուրյանը ստիպված եր մի կտոր հացի համար իր հպարտ գլուխը խոնարհել հայ աղաների առջև։ Նույն ուսման ծարավը, քաղաքական հալածանքի հետ մեկտեղ, ուրվականի պես հետապնդել են հայ նշանավոր հեղափոխական դեմոկրատ Միքայել Նալբանդյանին, նույն հացի խնդիրն և հարկադրել

տաղանդավոր վիպասան Պերճ Պռոշյանին իր կյանքի վերջալուսին մի կտոր հաց ճարել ածխավաճառությամբ։ Հացի խնդիրն և հարկադրում Մուրացանին թաղվել հաշվապահական մատյանների մեջ և հայ պաշտոնական հասարակության հասցեին գրել իր մեղադրական տողերը։ Գրականության այդ վիճակն ինքնին մերկացնում է հայ հին պաշտոնական հասարակության զարշելի դեմքը։ Սակայն ամենից ավելի մենակության եր դատապարտված Ալեքսանդր Ծատուրյանը, մի մարդ, վոր ամենից ավելի կարիք ուներ մարդկային բարեկամության ու քաջալերանքի։ Պոետի բանաստեղծությունների մեջ զգացվում է այդ տխուր մենակությունը, վոր մռայլ ամպերով ծածկում է նրա քնարերգությունը։

«Զգիտեմ, ի՞նչպես ես անում դու, Միխայել ջան, բայց յես... յես շարունակում եմ ելի սաղ կյանքս տնքալ «կտոր հացի» ծանր լծի տակ... Կտրված իմ սիրած և փայփայած գիրուց գրչից՝ առավոտից մինչև իրիկուն նոքաթրությունն եմ անում տեղական հայերից մեկի կոնտորայում։ Իրավ է, մեկ-մեկ ձեռ եմ առնում գրիչս, բայց վա՜յ են ձեռք առնելուն, Մի՛խայել։ Ուղեղս հոգնած «չոքկի» չխչխկոցից, հոգիս հյուծված կոնտորայի գարշ մթնոլորտից, ել վո՛չ առաջվա խանդն ու յեռանդն ունեմ, վոչ առաջվա թև ու թռիչքը... Ահա ի՛նչ է պատճառը, վոր վաղուց ել չեմ յերևում գրական հորիզոնի վրա, կամ յերևում եմ յերկար ընդմիջումներով և անուն ել գրական ասպարիզում կամաց-կամաց շիրմաքարի տակ է մտնում, այսինքն՝ մոռացվում է...»։

Այսպես և գրում իր նամակներից մեկում Ալեքսանդր Ծատուրյանը հայ ականավոր վիպասան Նար-Դոսին, վորի հետ մինչև իր կյանքի վերջը պահպանել է ընկերական ջերմ կապ։ Բայց հազիվ թե Նար-Դոսի վիճակը ավելի նախանձելի յեր իր բանաստեղծ ընկերոջ վիճակից։ Զարմանալի համեստ պոետը բազմիցս խոսում է իր վիճակի մասին, վորի պատճառով իր տխուր կյանքում նա զրկված է յեղել ստեղծագործելու տարրական հնարավորություններից։ Մոռացության, մենակության մթնոլորտում Ալեքսանդր Ծատուրյանը պահպանեց իր հոգեկան մեծությունը և մարդկային բարձր գծերը։ Ահա ականավոր հեղինակի կյանքի եպոպեայի սեղմ նկարագիրը։

Ալեքսանդր Ծատուրյանը գրական ասպարեզ իջավ պարբերական մամուլում 1886 թվին մի թարգմանությամբ, որը տպագրվեց մանկական «Աղբյուր» հանդեսում։ Բանաստեղծի ստեղծագործությունների առաջին ժողովածուն լույս տեսավ 1891 թվին, իսկ 2-րդ, և ավելի սավար ժողովածուն՝ 1898 թվականին։

Ինչպես վերևում նշեցինք, բանաստեղծի հասարակական հայացքների կազմակերպման գործում նշանակալից դեր խաղացին նրա գրական առաջին դասախարակությունն ու անձնական բարեկամական կապերը։ Բախտի դիպվածով պատանի Ալեքսանդրը դեռ աշակերտական նստարանի վրա հանդիպեց գյուղագիր Արշակ Ագապյանին։ Հայ ժողովրդական ուսուցիչն ու գրողը նշանակալից դեր խաղաց պոետի կյանքում։ Այդ մասին պատմում է ինքը բանաստեղծը։ Արշակ Ագապյանը խիստ հետաքրքրքրական դեմք է մեր գրականության մեջ։ Նրա «Խաթունի արտը», «Մուսինի դանդատը», «Սև որերի վախճանը» պատմվածքները մանր գյուղացիության քայքայման, սեփականազրկման ցնցող դրվագներ են, գեղարվեստական խոշոր փաստաթղթեր հայ հին գյուղի մասին։ Մանր գյուղացիության հետ կապված այս հեղինակն անկասկած վորոշակի կերպով աղդել է բանաստեղծի վրա։ Ալեքսանդր Ծատուրյանի բանաստեղծությունների մեջ զգացվում է, վոր Ագապյանի հետ ունեցած մոտիկությունն իզուր չի անցել և նշանակալից դեր է խաղացել բանաստեղծի գրական հայացքների կազմակերպման վրա՝ սկզբնական շրջանում։ Բանաստեղծի կյանքի դեպքերն այնպես դասավորվեցին, վոր նա արհեստավորաց դպրոցում հանդիպեց հայ գրականության ավելի ականավոր հեղինակներից մեկին՝ Նար-Դոսին։ Դա, իհարկե, սոսկ բարեկամական կապ չեր։ Ըստ էության վիպասան Նար-Դոսը արձակի մեջ հասարակական-գրական նույն շերտերի և ուղղության ներկայացուցիչն եր, ինչպիսին պոեզիայի մեջ Ծատուրյանը։ Ծատուրյանն արտահայտում է այդ մոտիկության բնույթը Նար-Դոսին նվիրված հետևյալ բանաստեղծության մեջ.

Այնքան դառը ցավ ու վշտեր
Կուտակված են իմ սրտում,
Վար յեթե քեզ, ազնի՛վ ընկեր,

Վաղբամ նոցա իմ յերգում,—
Քո առաջև արտասուքի
Դու կրտեսնես մի մեծ ծով,
Վոր հուզվում է վիշտ ու սուգի
Սիրտը մաշող փոթորկով...

Պոետի «վիշտ ու սուգը» սիրո անուրջների սիրահար ինդիվիդուալիստի «տառապանքի» արգասիք չե։ Ալեքսանդր Ծատուրյանի պոեզիան՝ խորապես հասարակական է և նրա ստեղծագործության վիշտը ժողովրդական վշտի արձագանքն է։ Բանաստեղծն իր առաջին իսկ ստեղծագործությունների մեջ արտահայտում է իր պոեզիայի վշտի հասարակական ակունքները։

Յես չեմ յերգում։ Իմ յերգերում վշտալի
Այն բվառն է՝ անարգ բախտից հալածված
Յուր վիճակը անվերջ սրգում ու լալի,
Յուր ցավերը յերգով պատմում նա մարդկանց...

Պոետը բարձրացավ կյանքի հատակից, պոեզիայի կոչումը տեսավ ժողովրդի ինքնագիտակցության զարթեցման, մարդկային արդարության, ազնվության, սիրո և յերջանկության լուսավոր յերգերի մեջ, ուր պիտի հնչեր գրողի անկաշառ ձայնը խավարի և բռնակալության դեմ։

Յես պիտի յերգեմ և փառաբանեմ
Սիրո հաղցրության և կուսի պատկեր.
Յես պիտի յերգեմ անկաշառ ձայնով,
Սուրբ նշմարտության դրոշակը ձեռին.
Յես պիտի յերգեմ... Թեկուզ այդ յերգով
Հալածանք միայն վաստակեմ անձիս...
Թո՛ղ տգիտության բանձր խավարում
Խարխափողների խուրձն բազմությունն,
Սպառնալով դրոշիս սոսկալի անկում,
Ձգեն խարտակել նորա վեհությունն.
Թո՛ղ ստրկանոգին՝ կրքից կուրացած,
Նախանձն ու սև բույն թափե իմ գլխին.
Թո՛ղ բռնավորը գոռա կատաղած.
«Մա՜հ այդ անպատկառ, չնչին մեղուկին...»

«Իմ ուխտը» բանաստեղծության այս տողերը հիշեցնում են Միքայել Նալբանդյանի հետևյալ բանաստեղծության վոգեշունչ տողերը.—

Ցե՛ս պիտի դուրս գամ դեպի հրապարակ*),
Առանց ֆնարի, անզարդ խոսքերով.
Ցես պիտի գոչեմ, պիտի բողոքեմ,
Խավարի ընդդեմ պատերազմելով:

Ալեքսանդր Ծատուրյանը «Իմ ուխտը», «Պոեմին» և մի շարք այլ բանաստեղծությունների մեջ լիովին արտահայտում է իր պոեզիայի ժողովրդական ուղղությունը:

Հայ պոեզիան 80-ական և 900-ական թվականներին բարձրացավ մի նոր կուլտուրական աստիճանի վրա: Պոեզիայի մեջ վոտք դրեց կենդանի, իրական մարդը, ժողովրդական զանգվածների կյանքը, նրա շերտերից դուրս յելած հերոսը: Այդ ինքնին պատմական մեծ քայլ եր: Հայ պոեզիան վոտք դրեց կուլտուրայի նոր ու լայն ճանապարհի վրա: Նոր ռեալիստական գրականության և պոեզիայի դեմոկրատական տարրերի հիմնական դեմքը ժողովրդական զանգվածներն եյին, նրանց կյանքն ու առտնին հոգսերը, նրանց հասարակական տրագեդիան, նրանց իրական հերոսները: Անկասկած այդ պրոցեսը պատմական զարգացման արդյունք եր: Բուրժուական հասարակությունը սեփականաղրկում եր գյուղը և մանր արհեստավորությունը: Սակայն այդ նույն կարգերում ստեղծվում եր մի նոր ինտելիգենցիա, գրողների մի նոր սերունդ, վորի մի մասը սերում եր կամ գյուղացիությունից, կամ արհեստավորությունից: Այդ սերունդը հիմնականում արտահայտեց իր պոեզիայի մեջ ժողովրդի կյանքն ու վիշտը: Այդ դեմոկրատական շերտն եր, վոր նոր պատմաշրջան բացեց հայ նոր պոեզիայի պատմության մեջ:

Այդ նշանավոր բանաստեղծներն իրենց հայացքն ուղղեցին դեպի ռուս մեծ ժողովրդի առաջավոր հասարակական միտքն ու պոեզիայի խոշոր կուլտուրան: Ցեվ յեթե այնուամենայնիվ մեր դեմոկրատական պոեզիայի ներկայացուցիչները, վորոնք ազդվեցին Պուշկինի, Լերմոնտովի, Նեկրասովի պոեզիայից, բայց լիովին չազատագրվեցին վորոշ նախապաշարումներից, ապա դրա պատճառը պիտի վորոնել մեր հասարակական կյանքի հետամնացության մեջ, քան թե բացատրել հայ ականավոր պոետների սուբյեկտիվ կարողություններով ու ցանկությամբ: Այդ ավելի շուտ նրանց տրագեդիան է, քան թե հանցանքը: Ահա թե ինչու թե Ծատուրյանի, և թե մի շարք այլ հեղինակների իսկական դեմոկրատիզմը միաժամանակ արտահայտում է հայ արհեստավորության ու նահապետական գյուղացիության միամտությունը, անհետևողականությունը, իլյուզիաները և այդ շերտերի հասարակական հոգեբանության այլ գծերը:

Լենինի հանճարեղ գնահատականը Տոլստոյի մասին ուղեցույց է անցյալի գրականության դեմոկրատական հեղինակների հայացքների աղաղակող հակասությունները հասկանալու համար: Ալեքսանդր Ծատուրյանի պոեզիան հասկանալի յե այդ լույսի տակ: Այդ տեսանկյունից հասկանալի յե դառնում Ծատուրյանի թե դեմոկրատիզմը և թե միամտությունն ու նախապաշարումները: Այդ պայմանավորվում է տաղանդավոր բանաստեղծի պոեզիայի հասարակական ակունքներով և բխում է նրանից:

Ծատուրյանի գրական դեմոկրատական հայացքների կազմակերպման պրոցեսն ավարտվեց ռուսական առաջավոր հասարակական մտքի և պոեզիայի ազդեցության տակ: Այդ մասին վորոշակի վկայում է պոետը Ցուրի Վեսելովսկուն գրած իր հայտնի նամակում:

«Ռուս բանաստեղծներից առանձնապես ջերմորեն սիրեցի յես Լերմոնտովին: Իմ համոզմամբ միշտ եղ ակնածությամբ և արբազան բրդումով է նայել այս հոյակապորեն տխուր, բանաստեղծական դեմքի վրա: Այս անհանգիստ, միշտ տառապող հոգին, այս «մենավոր առագաստը» կյանքի ծովում, միշտ փոթորիկ փնտրողը («կարծես թե փոթորիկներում հանգիստ կա»), ինձ միշտ եղ դյուրել և խորապես հուզել:

Իմ վրա անջրդարձել է յե՛վ Պլեշչեյեվի ու Նադսոնի, մանավանդ առաջինի ազդեցությունը: Պլեշչեյեվի բարի, հեզ, մանկականորեն փաղաքշող ու ֆիֆուլջ մուսան ինձ միշտ թվա-

*) Թեև Միքայել Նալբանդյանի մասին Ալեքսանդր Ծատուրյանը հիշատակություններ չունի գրական գործերի մեջ, բայց իր նամակներում զգացվում է այն հ.մակրանքը, վոր բանաստեղծը տածում է դեպի հայ ականավոր դեմոկրատը: Իզուր չե, վոր Ծատուրյանին զբաղեցրել է Միքայել Նալբանդյանի անտիպ յերկերը հրատարակությունը:

ցել է վարպես գթության հույր, վորին խորթ է չարությունը, ատելությունը, վորի համար չկա վոչ հրեա, վոչ հելլեն»

Նամակի մեջ ամենից ուշագրավն է Ալեքսանդր Ծատուրյանի Լերմոնտովին տված գնահատականը։ Բանաստեղծին գրավում է Լերմոնտովի «միշտ փոթորիկ փնտռող անհանգիստ հոգին»։ Ակներև է, վոր պոետի հիացմունքը լոկ եսթետիկական հրճվանքի արդյունք չէր և պարզորոշ կերպով յերևում է, թե ինչն է գրավում նրան Լերմոնտովի պոեզիայի մեջ։ Ալեքսանդր Ծատուրյանին հուզում է վոչ միայն Պուշկինի, Լերմոնտովի, Կոլցովի, Նեկրասովի պոեզիայի մեծ կուլտուրան, այլ և խոշոր ազգային պոետների հեղափոխական դեմոկրատական տրամադրությունները։ Այդ գիծը վորոշակի կերպով արտահայտվում է վոչ միայն Վեսելովսկուն գրած նամակում, այլև Ալեքսանդր Ծատուրյանի կատարած թարգմանությունների մեջ։ Բանաստեղծի նախասիրությունները այս խնդրում բացահայտում են ռուսական պոեզիայի նրա վրա ունեցած ազդեցության բնույթը։ Պատահական չէ, վոր Ալեքսանդր Ծատուրյանը թարգմանել է ռուս հանճարեղ պոետների այն ստեղծագործությունները, վորոնց մեջ նրանք ձեռնոց են նետում ցարիզմին և իրենց ժամանակակից պաշտոնական հասարակությանը։ Ալեքսանդր Ծատուրյանի թարգմանությամբ լույս տեսած ռուս բանաստեղծների յերկու ժողովածուների մեջ վորոշակիորեն աչքի յե ընկնում այդ կարևորագույն հանգամանքը։ Ծատուրյանը Պուշկինից թարգմանել է նրա «Գյուղ», «Անչար», «Կովկաս», «Կալանավոր», «Մարգարե», «Շուտ անցան» («Չաադայեվին») բանաստեղծությունները։ Ահա այդ բանաստեղծությունների մեջ է վորոնում Ալեքսանդր Ծատուրյանը Պուշկինի ազատասեր պոեզիայի վոգին։ Ահա թե ինչու նա թարգմանել է հանճարեղ պոետի Չաադաևին նվիրված մարգարեական տողերը*)։

*) Պուշկինի՝ միապետության դեմ ուղղված բանաստեղծության թարգմանությունը լոկ գրչի հանաք չեր Ալ. Ծատուրյանի համար։ Բանաստեղծը 1894 թվի հոկտ. 31-ի թվակիր նամակում նկարագրելով Պուշկինի թաղումը և Նիկոլայի դահ բարձրացումը, վորոշակիորեն արտահայտում է իր բացասական վերաբերմունքը դեպի ցարիզմը և միաժամանակ մերկացնում է ցարիզմի կամակատար, Մոսկվայի հայ աղաների քաղաքական ստորաքարշության, այդ ճարպիկ ռեժիսյորների հպատակության ցուցքը, վոր արվում է հայ ժողովրդի անունից։ Ստորև բերում ենք մի հատված այդ ուշագրավ նամակից.

«Մի քանի խոսք էլ Ջանել կայսրի մասին։ Նրան էլ տեսա. գլուխը կախ, լուռ ու մունջ հետևում եր դիակարքին։ Դա մի կարճահասակ, լղար-լղար, դժգույն ու վատուժ տղա յե։ Տղա յե... բայց տեր ու հրամայող է հարյուր միլիոն ժողովրդի... առանց անցյալի, առանց մի արտակարգ, բարձ հանճարի, անորոշ ներկայով և անհայտ ապագայով — նա այսոր հանդես է գալիս վորպես հարյուր միլիոն ժողովրդի ղեկավար. նա հանդիսանում է անխախտելի որենք, անհակաճառելի կամք... Ե՜հ, դա կյանքի մի անմիտ խաղ է, մի չարանենգ ծաղր, վոր մարդկության պատմության մեջ առաջինը չէ և վոչ էլ վերջինը... Ազգերի պատմությունը վաղուց է մեզ հաշտեցրել այդ հրեշային յերևույթի հետ...»

Հավատա՛—կրգա, կրգա՛, անկասկած,
Շողավառ այգը բախտաբեր գարնան·
Յեվ հայրենիքը բնից սթափված,
Ինքնակալ ուժի բեկորների վրա
Կրդրոշմե, ընկե՛ր,
Անունները մեր։

Ակներև է, վոր Ալեքսանդր Ծատուրյանին թարգմանությունների մեջ նրան գրավել է Պուշկինի պոեզիայի ժողովրդական վոգին։ Այդ մոտեցումն ունի բանաստեղծը նաև դեպի Լերմոնտովը։ Նա թարգմանել է Լերմոնտովի «Նվեր Դև պոեմային» «Քեզ մի հավատար», «Կալանավոր», «Ժայռ», «Կաղբեկին», «Առագաստ» բանաստեղծությունները։ Զափազանց հարազատ են հնչում Ծատուրյանի համար Լերմոնտովի հետևյալ տողերը·

Պարզասիրտ վորդին վեհ ազատության
Զգացման համար կյանք չեր խնայում.
Յեվ հավերժ գծեր ազատ բնության
Նա կենդանագրել հանախ եր սիրում։
Վրեժի, կրքերի և յերջանկության
Նորա մեջ հոգին պանում եր պատար.
Փչե՜ց նա շունչը։ Անհա գերեզման։
Մարդկանց համար չե՜ր նա յեկած աշխարհ։

Կոլցովի պարզ ժողովրդական յերգերը Ծատուրյանը թարգմանել է բնագրի հարազատությամբ և գյուղական պարզ կյանքին նվիրված այդ յերգերի հետ առնչություն ունեն բանաստեղծի «Սերմնացան» ու «Ցերկրի մշակներ» բանաստեղծությունները։

ները։ Ալեքսանդր Ծատուրյանը նույն մոտեցումն ունի դեպի արևմտա-եվրոպական պոեզիայի ներկայացուցիչները՝ Բայրոնը, Վիկտոր Հյուգոն և Հայնեն։ Պոետի թարգմանությունները վորոշակիորեն վկայում են հեղինակի հասարակական նախասիրությունների մասին։ Ալեքսանդր Ծատուրյանը հանդիսացավ մեր մի շարք ականավոր բանաստեղծների նախորդը։ Ծատուրյանի պոեզիայի այդ նշանակության ու ազդեցության մասին մենք ունենք ուղղակի վկայություններ մեր անցյալ պոեզիայի մեջ։ Ուշագրավ է այդ տեսակետից տակավին յերիտասարդ բանաստեղծ Վահան Տերյանի «Մթնշաղի անուրջներ»-ում Ալեքսանդր Ծատուրյանին նվիրած «Աղբյուր» բանաստեղծությունը։

Մահու պես դաժան ծմեռն է իջել·—
Մարել են, մեռել—յերգ, ծաղիկ ու բույր.
— Դու քար grsում ես, ձյուների մեջ ես
— Հավետ կենդանի, կարկաչո՜ւն աղբյո՜ւր·
Ժեռ սարի կրծքից դու դուրս ես բուչում,
Սառույցը ճեղքում—գոհարներ ցողում,
Ծաղրանքով ձյունի յերեսն ես բրջում,
Մռայլ յերկնի դեմ պայծառ ծիծաղում։
Քո մեջ ապրում է հույսը չմարող...
Դո՜ւ վորպես գալիք գարունների լուր,
Դո՜ւ վորպես սեր՝ մահու դեմ կարող—
Ազատության յերգ, կարկաչո՜ւն աղբյուր...

Այս բանաստեղծության մեջ յերիտասարդ Վահան Տերյանը վոչ միայն հիացմունքով է արտահայտվում Ծատուրյանի մասին, այլ և աշխատում է ընութագրել նրա պոետական դեմքի նկարագիրը։ Կասկածից վեր է, վոր «գոհարներ ցողող» Ծատուրյանի պոեզիայի «կարկաչուն աղբյուրը», վոր ծիծաղում եր «մռայլ յերկնի դեմ» յերիտասարդ բանաստեղծի պոեզիայի առաջին սրկղբնաղբյուրն եր, վորով այնքան վոգևվորված եր պոետը։ Այդ վոգևվորության արդյունքն եր միայն «Աղբյուր» բանաստեղծությունը, վորի խորագիրն անգամ շատ բան է ասում Տերյանի կրած ազդեցության մասին։ Բնավ եյական չէ այն հարցը, վոր Վահան Տերյանը հետագայում փոխեց իր վերաբերմունքը դեպի Ծատուրյանը։ Եյականն այն ազդեցությունն է, վոր Ծատուրյանի լիրիկան ունեցավ մեր քնարական պոեզիայի ստեղծման ու զարգացման գործում։ Արդ, կասկածից վեր է, վոր Ալեքսանդր Ծատուրյանը մեկն եր այն դեմքերից, վորոնք հայ պոեզիայի մեջ բերին ռուսական պոեզիայի կուլտուրան։ Ալեքսանդր Ծատուրյանը քայլ առ քայլ եվոլյուցիա կատարեց, նրա դեմոկրատիզմը գնալով ավելի խորացավ, որգանական դարձավ։ Ի վերջո պոետը գրեց «Բանվորուհու որորը» նշանավոր բանաստեղծությունը, վորի մեջ վողջունեց հեղափոխական գնդերի վոսկու թաղավորության դեմ մղած կռիվը։

3

1/ Նշանակալից է Ալեքսանդր Ծատուրյանի պոեզիայի զրական, պատմական արժեքը։ Իր նամակներից մեկում պոետը դատապարտելով «գեղարվեստը գեղարվեստի համար» սիմվոլիստական տեսությունը, առաջադրում է «գեղարվեստը կյանքի համար» նշանարանը վորպես զրական նոր ուղղության նշանարան։ Վորոնք են պոետի հասարակական մղումները—այդ մենք տեսանք վերևում։ Դրանք ցայտուն գծերով արտացոլվում են պոետի ստեղծագործությունների մեջ։ Ահա թե ինչու բուրժուական մամուլն ու հրապարակախոսությունը լռության մատնեց և հալածեց Ալեքսանդր Ծատուրյանին։ Մի շարք բանաստեղծությունների մեջ պոետը տեսնում է իր դեմ նախապատրաստվող հալածանքն ու զգում է, թե ինչու բուրժուական վաճառված մամուլը լռության է մատնում իրեն։ Ի պատիվ բանաստեղծի պիտի հիշատակել, վոր նա վոչ միայն բարձր կարծիք չունի հայ բուրժուական մամուլի մասին, այլև հայտնապես տեսնում է նրա վաճառված դեմքը։

Ցերբ հայոց թերթերում
Ներբող են կարդում
Տըզրուկ աղայի անվան ու փողին,
Իսկույն իմ մտքում
Մի հարց է ծագում.
«Թերթը վո՞rման է ստանում տողին»...

Վերոհիշյալ տողերի արձագանքն է կարծես Հովհաննես Թումանյանի հետևյալ հատվածը, վորի մեջ նշանավոր բանաստեղծը ընութագրում է ժամանակակից հայ բուրժուական մամուլի խսկական դեմքը.

Ցեվ դու տեսե՞լ ես նրա գազերը,
Վոr ազատ միտ է վանառում հոլին,

Զգո՞ւյշ, բարեկամ, չրվիճես ճեսը,
Թե չե կմատնի քեզ պոլիցիայինը...

Ալ. Ծատուրյանը, որն իր գրոշակի վրա գրում եր «յերգել անկաշառ ձայնով սուրբ ճշմարտությունն ու ժողովրդի արդար վաստակը», որն այնքան սուրբ տողերով ծաղրում է հայ մեծատունին, հայ ազային, բնականաբար չեր կարող արժանանալ բուրժուական մամուլի գովասանքին։

«Ամբոխին» բանաստեղծությունը, որը կրում է Պուշկինից մի եպիգրաֆ, ունի հետևյալ նշանակալից տողերը.

Աղքատ ուզո՞ւմ ես, որ ես արքազան
Ցուր մաքուր յերգը, որպես մի վանառք,
Փողոց հանելով՝ քրոնը մեծատան
Դրվատե՞ գործեր զազիր և անարգ։

Պոեզիան բանաստեղծի համար «անսպառ լույս է, որ չի ընկճվի խավարի առաջ», «անշեջ հրաբուխ է, որ չի հանդչի թեկուզ հեղեղից» և «հզոր արծիվ», որին «չի սարսափեցնի մրրիկ, որոտ, փոթորիկ»։

Ալեքսանդր Ծատուրյանը պոեզիայի հասարակական արժեքը տեսնում է նրա լուսավորության մեջ։ Պոեզիան ժողովրդի ուսուցիչն է, նա պետք է վճիռ արձակի կյանքի մասին, նա պիտի սովորեցնի «ճշմարիտն ու գեղեցիկը», նա պետք է թշնամի լինի ամեն տեսակ ստորաքարշության, ստրկության, պիտի դատապարտի «քսու մեծատան» զազիր և անարգ գործերը և պիտի լինի ժողովրդի հետ։ Ահա թե ինչու «Գրչի հանաքներ»-ի մեջ նա սուր հեգնանքով ծաղրում է բուրժուական բարոյականության «սրբություններին», նրա «բարեգործությունն» ու «ազգասիրությունը», դիմակազերծում է բուրժուական հասարակության կեղծ բարոյական այլանդակ դեմքը, ցույց է տալիս իշխող դասակարգերի հոգեկան սնանկությունն ու աղքատությունը, կեղծիքն ու ստորաքարշությունը։

Ցես գիտեմ կյանքում աբոռ մեծուրյան,
Խաչեր ու ասոդեր շարե-շա՜ր վերան,
Ով այդ աբոռին հասնել ուզենա
Ցերկու հատկություն պետք է ունենա—
Մեծի առաջև խոնարհվի՛լ, դողա՛լ...
Մեծի հետևից կամացո՛ւկ սողալ...

Այդ է «փառք և աթոռ» շահելու միակ ճանապարհը բուրժուական հասարակության մեջ, այսինքն կարիերիզմի ստորաքարշ ճանապարհը, որը վոչնչացնում է մարդկային հոգու գեղեցկությունը։

Բանաստեղծի գրչից չեն վրիպում հայ մեծատունը, հայ աղան, հայ հոգևորականն ու բուրժուական ինտելիգենտը։ Այդ խարդախների վրա իշխում է վոսկու թագավորությունը։

Բայց ահա՛ կյանքի նա դպրոց մտավ,
Ցեվ, գիտե՞ք խղեալն ինչ բանում գտավ—
Հարուստ ոժիտով մի աղջիկ առավ
Ցեվ կնկա փողով... հայտնի մարդ դառավ։

Ծատուրյանի քննադատությունը բուրժուական կարգերի «նեգատիվ» կողմերի քննադատություն չե, որով զբաղվում եյին լիբերալ բուրժուազիայի գեղարվեստագետները, որոնց նպատակն եր փրկել բուրժուական հասարակության կործանվող նավը։ Պոետի համար մարդկային անկման, այլասերման, ստորացման, վաճառքի ամենացած գծերը, տիրող դասակարգերի «հերոսների» հասարակական գծերն են։ Այդ նրան սահմանագծում է բուրժուական այն գրողներից, որոնց յերկերի մեջ «անառակ վորդու» բացասական տիպին ընկերակցում է նրա բարոյական խրավիլակը, բուրժուական անհատի «կատարելատիպը»։

Ալեքսանդր Ծատուրյանի և մեր դեմոկրատական գրականության համար, այդ բարոյական խրավիլակը գոյություն չունի։ Նրա քննադատությունը, որքան ել միամիտ է, այնուամենայնիվ փրկություն չի վորոնում այդ հասարակության համար, արմատական է, անկեղծ է, բարոյական սխեմաներ չունի, նրա կրիտերիումը կյանքի ճշմարտությունն է։

Ալեքսանդր Ծատուրյանի «Գրչի հանաքներ»-ի սրամիտ ու նուրբ յերգիծանքը ստեղծագործական միջոց է, որով նա գերծում է պաշտոնական հասարակության դիմակները։ Նրա փոքրիկ եպիգրամներն ու առակները, ալեգորիաները ուժեղ սարկազմ ունեն։ Սիրո ու վշտի յերգիչը խայթող յերգիծանքի տողերի մեջ վրեժ է լուծում, լիաթոք ծիծաղում է, հանգստանում է։

Նա չի խնայում պաշտոնական հասարակության և վոչ մեկ սրբության։

Ի՞նչ նամբով հեծ ե միշտ լցնել գրպան—
Հարուստն այդ նամբեն լա՞վ ե իմանում.
Մեկին բաշխում ե նա իր հին գուլպան,
Իսկ հարյուր մեկի շապիկն ե հանում...

Այս բանաստեղծության մեջ արտահայտված ե բուրժուական «բարեգործության» դիշատիչ դեմքը, վոր պարուրվում ե բարոյական կեղծ դիմակի տակ։ Ահա և հայ հոգեվորականի դեմքը։

Կարծես թե Ծատուրյանն ու Հովհաննես Թումանյանը արձագանքում են միմյանց.

Մանրավանառի նա խանութ բացեց,
Ծախում ե կոնակ, ասեղ ու մատակ,
Բայց առուտուրին խելքը չպատեց,
Փակեց խանութը, չունեցավ վատակ։

Վերջը նարահատ յերբ տեսավ վոր եկ
Մարդ չի դառնալու, հույսն եկ ե կորել,
Հայոց «այբուբենն» նա անգիր արավ
Ցեվ ազգի գլխին քահանա դառավ...

Մարդկային կյանքի բարձր գծերը այլանդակվում են վոսկու թագավորության ներքո, վոր ապականում և այն ամենը, ինչ մարդկային ե։ Մարդկային արժանավորությունն անդամ չափվում ե վոսկով, յեզրակացնում ե պոետը։

Բայց թե վոր հարցնեք դուք հայ կրեսոսին
Կասե «պատիվն ե՝ արծաթ աբասին»,
«Ցեվ կյանքում անփող, դատարկ գրպանը,
Դա՞ յե ամենից անպատիվ բանը...»

«Արծաթ աբասին» վոչնչացնում ե մարդկային ազնվությունն ու շիտակությունը, և չի կարելի հասնել դրան առանց դրկվելու մարդկային արժանապատվությունից։

—Իմ ծոցս գալու կան շա՞տ ուղիներ,
Ասաց Մամոնան,—ծուռ, ձախ, վար ու վեր...
Ցեվ վո՛ւռն ել ընտրես, իմ սիրած հյուրն ես,
Լոկ շիտակ ուղուց դու դարձրու յերես...

«Գրչի հանաքներ»-ի և բազմաթիվ այլ ստեղծագործությունների մեջ պոետը ընդգծում ե պաշտոնական հասարակության այլանդակ դեմքը։ Բանաստեղծը փրկություն չի վորոնում բուրժուական հասարակության համար, նա չի դիտում այդ հասարակության այլասերումը վորպես անցողիկ յերևույթ, նա լիբերալ ռեֆորմատոր չե, այլ դեմոկրատ, և կանգնած ե դեմոկրատիայի դիրքերի վրա, այդ դիրքերից ե նա քննադատում պաշտոնական հասարակությունը։

«Մեր դարը» բանաստեղծությունը կարծես թե ընդհանրացնում ե «Գրչի հանաքների»-ի հասարակական կյանքին տրված գնահատականը.

Մոլեգի՞ն դար ե, յեղբա՛յր, մեր դարը,
Հրպարտ ե նա զենքով, հարուստ՝ զոհերով.
Կաշկանդած ատծո ազատ ոչխարին,
Նա գահ ե հանում դահնին յուր սրով։

Լսում ենք—լո՞ւյս, սե՞ր, ազա՞տ գաղափար,
Որե՞նք, իրավո՞ւնք, ազա՞տ խիղճ ու ձայն—
Ո՞ւ, մեր ուրերում, մեր դարի համար
Դոքա ծաղրելի՞ խոսքեր են միայն...

Ցերկաթ ու վառոդ, արցունք ու արյուն,
Գայլի կուրծ ծիծաղ, գառան խուլ մայուն—
Ահա՛ բարիքներ, դափնիք պանծալի՞
Մեր առաջադե՞մ, լուսավո՞ր դարի...

Ահա հին հասարակության իսկական որենքները, նրա «պանծալի դափնիք», տխուր շեշտով յեզրակացում ե պոետը։ Ակներև ե, վոր այդ բանաստեղծությունն ուղղված ե ցարիզմի դեմ։ Բանաստեղծը համեմատում ե ընության ազատությունը մարդկային հասարակության հետ և տեսնում ե միայն տխուր հակապատկեր։

Միանչդեռ բնության լայնարձակ գրկում
Փոխադարձ սուրբ սեր և կյանք ե յեռում,
Մարդկային կյանքը... Ո՞, արարիչ տեր,
Վարպիսի՞ տխուր, դառն հակապատկեր...
Բռնություն՞ն, կապա՞նք, վո՞խ դրժոխային
Ճնշում, խեղդում են կյանքը մարդկային...
Ցեվ ո՞ւր ե անկյուն այս չար ոչխարհում,
Ուր թույլն, անզորը չի հարստահարվում...

Ծատուրյանն իր դեմոկրատական քննադատության մեջ եր փոխադրում նաև ժողովրդական նահապետական շերտերի նախապաշարումները, «անդոր նզովքները կապիտալիզմի և փողի իշ-

խանության հասցեին» (Լենին)։ Ուստի բնավ զարմանալի չէ, վոր խավարի դեմ պատերազմող պոետը, «Գիրը» լուսավորական բանաստեղծության հեղինակը, մարդկային վիշտը ամոքելու համար յերբեմն դիմում է յերկնքին, մարդկային սիրո ու յեղբայրության հասկացողությունները վորոնում եր քրիստոնեական բարոյականության մեջ։

Նա մերթ զայրանում է, բողոքում, մերթ՝ աղոթում է։ Մի կողմից բանաստեղծը մեծ անկեղծությամբ ու արժանապատվության մեծ զգացումով քննադատում է տիրող կարգերը, հարձակվում է տիրող հասարակության բարոյական կուռքերի վրա, ջերծում է պաշտոնական հասարակության դիմակները, ծաղրում է բուրժուական բարոյականությունը, իսկ մյուս կողմից անդոր անեծքներ է կարդում «չար աշխարհին», մասնավորապես իր ստեղծագործությունների առաջին ետապում, և վորոշ տուրք է տալիս նաև նացիոնալիզմին։ Այդպիսի մոտիվներ են Ծատուրյանի «Հայ մայրերին» և մի քանի այլ բանաստեղծությունները։

Սակայն Ալեքսանդր Ծատուրյանի դեմոկրատական բանաստեղծությունների մեջ և նրա պոեզիայի վողջ գրական-հասարակական արժեքը։ Այդ բանաստեղծություններով Ալ. Ծատուրյանը նոր ուղիներ եր հարթում մեր քնարերգության առջև։ Իր դեմոկրատական պոեզիայի մեջ բանաստեղծը հակադրում է ժողովրդի պարզ կյանքը պաշտոնական հասարակության բարքերին։ Ուղղամտությունը, սերն ու աղնվությունը, արժանապատվությունը և մարդկային ամենակատարյալ գծերը Ծատուրյանը տեսնում է ժողովրդի մեջ։ Յեթե տիրող շերտերի նկատմամբ բանաստեղծը խոշոր չափով ոգտագործում է նաև յերգիծաբանական ժանրը, ապա ժողովրդի կյանքի ու վաստակի յերգերը տոգորված են ամենաջերմ ու խորը լիրիզմով։ Ահա թե ինչու նա «Պոետին» բանաստեղծության մեջ պոեզիայի կոչումը տեսնում է ժողովրդի մարդկային այդ բարձր գծերը, նրա արդար վաստակը յերգելու մեջ։

Ամբոխը, պոե՛տ, գավակ է յերկրի,
Լուսազուրկ գավակ, frնաբար մշակ.
Նա միշտ կարո՛տ է կյանքի յերգերի—
Յերգի՛ր նորան հաց և արդար վաստակ։

Յերգի՛ր նորան լույս, բարիքներ ուսման,
Յեղի՛ր ամբոխին ուսուցիչ-ընկեր.

Նստի՛ր նորա հետ մի հաշի սեղան,
Շոշափի՛ր մոտից դու նորա վերքեր...

Յեվ տե՛ս, ո՛վ պատ, քեզ այն ժամանակ
Վորպիսի՞ սիրով կըսիրե ամբոխ.
Սե՛րն այդ կըհյուսե քեզ դափնե պըսակ,
Սե՛րն այդ կըկանգնե քեզ հավերժ կոթող...

«Սերմնացան», «Յերկրի մշակներ» և դեմոկրատական վոգով տոգորված իր լավագույն բանաստեղծությունների մեջ Ալեքսանդր Ծատուրյանը յերգում է ժողովրդի մարդկային գեղեցիկ գծերը։ Ժողովուրդը, նրա վաստակը, սերն ու սիրտը Ալեքսանդր Ծատուրյանի համար մարդկային լավագույն իդեալի մարմնացումն է։

Փա՞ռք քեզ, վոր հզոր,
Անվնաս հոգով
Թափում ես, մշա՛կ,
Դու առաս frտինք.
Քո սուրբ frտինքով
Բազո՛ւմ-բյուրավո՛ր
Ապրում են մարդիկ
Խաղա՞ղ, յերջանի՞կ։
Անխոնջ, ժրաջան
Դու մեղվի նըման,
Հանգիստ չըգիտես
Հայրենի յերկրում.
Վիշտ, ցավ ես կրում
Դու նորա կրծքին,
Մի՛շտ ուրախներես,
Միշտ զվարթագին։

Յերջանիկ կյանքի մարդկային լավագույն իդեալն որգանապես կապված է մարդկային արդար վաստակի հետ։ Հասարակական նույն իդեալների և ժողովրդասիրության արտահայտությունն է նաև «Յերկրի մշակներ» լավագույն բանաստեղծությունը.

Ո՞, ծանր հոգսերի խղճո՛ւկ զավակներ,
Վորքա՞ն համբերող, քաջ ե՞ք հոգին.
Տանջվում եք անվերջ—ոբեր, տարիներ.
Կարծես տանջանքն է միայն ձեր բաժին...

Տեսել եմ, ինչպես հուսալից, զվարթ
Դուք մշակում եք անմշակ դաշտեր.
Ինչպես տանջանքում անլաց, անվհատ
Դուք յերգ եք յերգում—վաստակի յերգեր:

Յերկրի մշակները ծանր հոգսերի մեջ անդամ չեն կորցնում իրենց հոգու կորովը, շահագործման ու կյանքի ծանր պայմաններում նրանք պահպանում են հոգու այդ մեծ զորությունը, մարդկային մեծ սերը: Ժողովուրդն է, որ պահպանում է մարդկային հոգու զեղեցկությունը, մարդկային յերջանկության և մարդասիրության իդեալները, որոնց արորում, վոչնչացնում, այլասերում ու ապականում եր ժամանակակից բուրժուական հասարակությունը՝ կեղծիքով, յերկաթով ու սրով: Ահա այս է այն բնորոշ սահմանագիծը, որ բաժանում է Ալեքսանդր Ծատուրյանին բուրժուական գրողներից և արտահայտում է նրա ժողովրդասիրության ու դեմոկրատիզմի իսկական վոգին: Իր «Պանդուխտի յերգեր»-ի մեջ Ալեքսանդր Ծատուրյանին զերազանցապես գրաղեցնում է ժողովրդի դառն վիճակը, որ հարկադրում է նրան ձեռք առնել պանդխտության ցուպը: Պանդուխտի յերգերի մեջ նրա կարոտի առարկան ընտանիքն է, սճախը, նրա դաշտն ու հանդը.

Վո՞նց մոռանամ յես ես վարքամ
Դաշտն ու արտը, ուր շատ անգամ
Ասես, թիթեռ թրռթրռացել,
Արար-աշխարհն եմ մոռացել...

Ուր լսել եմ արտիս ազիզ
Գեղջուկ-մշակ յեղբայրներիս
Դառն լացը, կուշտ ծիծաղը,
Ուրախ-տխուր յերգ ու տաղը...

Եյապես սա նույն սերմնացանի և կամ յերկրի մշակների յերգն է պանդխտության մեջ:

Ալ. Ծատուրյանի լուսավորականությունը որգանապես կապված է նրա դեմոկրատիզմի հետ: Նա խոշոր հավատ ունի գեպի լուսավորության ուժը: Գիտության և գրականության, պոեզիայի և վոգի դպրության պատմական արժեքը պոետը տեսնում է ժողովրդի լուսավորության գործին ծառայելու մեջ: Դրանք կյանքի դատարկ զարդարանքը չեն: Պոեզիան վոչ միայն պիտի յերգի ժողովրդի արդար վաստակը, այլև պիտի հանդիսանա նրա լուսավորիչը: Պոետ-լուսավորականը ժողովրդի փրկությունն անդամ սպասում եր լուսավորությունից, չըմբռնելով սակայն նրա դասակարգային եյությունը: Ըստ Ծատուրյանի լուսավորությունը կարող եր վերացնել անդամ սոցիալական անհավասարությունն ու արմատապես փոխել ժողովրդի վիճակը: Այդ հայացքներն է արտահայտում պոետի «Գիր» բանաստեղծությունը, որ ժողովրդականություն է վայելել անցյալ դարի մեջ:

Գիր կարդալով—դու աշխարհիս
Կը ճանաչես չարն ու բարին.
Ո՞վ է խնդում, ո՞վ է լալիս...
Ո՞վ է զրկում խեղճ բռվարին...

Անբախտ հայրդ գիր չըգիտեր,
Հողագործ եր—կարոտ ուսման,
Գյուղի անգուր վաշխառուներ
Քաղցած, ծարավ բողին նրան:

Լուսավորության գործողության դաշտը ժողովուրդն է, ճանաչողության որյեկտը՝ նրա վիճակը: Բանաստեղծը տգիտության և հեռատեսության արգասիք է համարում ժողովրդական զանգվածների շահագործումն ու դառն վիճակը: Բայց այնուամենայնիվ հենց այդ բանաստեղծության մեջ, որտեղ նա գիրն ու լուսավորությունը ներկայացնում է, որպես փրկության ամենակարող համադարման, հանդում է այն յեզրակացության, որ փրկության ափերը անհայտ են:

Գիշեր-ցերեկ հա՞ լողում եմք...
Վորտեղ է ափն... ո՞ւր եմք լողում...

Ահա այդ է պոետի իսկական տրագեդիան, նրա պոեզիայի անլուծելի զորդյան հանգույցը: Այդ է նրա դեմոկրատիզմի ամենաթույլ ողակը և այն բանաստեղծը, որ այնքան կարոտով ու սիրով յերգում է ժողովրդի յերջանկության և մարդկային սիրո բարձր իդեալը, մտածում է լավագույն ապագայի մասին, այնուամենայնիվ չգիտե թե ուր է յելքը, և նրա ոպտիմիզմն ու պայծառատեսությունը ապագա լավ ժամանակների մասին մոայլվում են պեսիմիզմի խորը թախծալից յերգերով:

Այդ մենության ու պեսիմիզմի ախուր մեղեդիներն են «Պոետին» և մի շարք այլ բանաստեղծությունները:

Հոգիս մոռ՛ալ, մոռ՛ալ իմ յերգ,
Ել սիրտ չկա տանջվելու...

Դուրս եմ յեկել ծովի յեզերք,
Դարդս ծովին պատմելու...

Ա՜խ, լսիր ինձ և ինձ ներս լաց,
Տո՛ւր վրեստիս արձագանք.
Թո՛ղ ցավերով մտերմացած՝
Մեկտեղ գտնենք սփոփանք...

Զգայուն քնարերգուհի լիրիկան արտահայտել է վիրավոր, պարզ հոգու խորը մենությունը: Թշնամիները միայն թույն էին խառնում պոետի հայի հետ, բայց պոետը չիջավ մարդկային արժանապատվության բարձր պատվանդանից:

Քե՛զ համար է իմ տանջանքը,
Ճշմարտության գաղափա՛ր.
Թո՛ղ քեզ զոհվի յերգչիս կյանքը,
Ցես ապրում եմ քե՛զ համար:

Ցեվ յերբ նոցա սև սրտերին
Խոսքս դիպավ, վորպես նետ,
Նոքա փրփուր բերաններին
Թույն խառնեցին հացիս հետ...

Բանաստեղծն այնուամենայնիվ կարողանում էր տեսնել կյանքի հուսո շող, վոր նոր կյանքի նախադուշակություն էր իհարկե, բայց պոետն ապրում էր լուսավոր ժամանակների հուսով և սեր էր յերգում աշխարհին:

Բայց իմ հոգին խուլ է մարդկանց այդ ձայնից,
Ցես որոնում եմ և՛ սիրո վիշտ, և՛ պատրանք,
Ցես վոգեզմայլ սեր եմ յերգում աշխարհին,
Առանց սիրո սրտի համար չկա կյանք:

Ալեքսանդր Ծատուրյանը հեղափոխության ազդեցության տակ գրեց «Բանվորուհու որորը» իր հեղափոխական բանաստեղծությունը, վորի մեջ վողջունեց բանվորական հեղափոխական զնդերին.

Մի՛ լար, վորդի՛ս, վոր չես լսում
Ել մայրական քաղցր որո՛ր.
Ցես մե՜ծ կռվի յերգն եմ հյուսում
Ոտցքիդ մոտ ամեն որ...

Դու լսո՞ւմ ես, այնտեղ, դրսում
Շա՜չ ու շառա՜չ, լա՜ց ու կո՜ծ—

Մեր արյունն է այնտեղ հոսում,
Ներկած է՛ տուն, և՛ փողոց:

Այնտեղ զրնգեր խառն ու ցրիվ,
Բանվոր զրնգերն ահարկու,
Քաջ մրցում են մի մեծ կռիվ—
Աշխատանքի՜ և վոսկու...

Պոետը կռվի յերգ էր յերգում, բանվորական զնդերի յերգը, վորոնք մղում էին աշխատանքի կռիվը վոսկու դեմ: Այն բանաստեղծը, վորի պոեզիայի ջերմ լիրիկայի մեջ հնչում էր վիշտը և աղոթք, «Բանվորուհու որորի» մեջ նա քաղցր որորը չէր յերգում, այլ կռվի յերգ է հյուսում: «Բանվորուհու որորը» պոետի դեմոկրատական հայացքների զարգացման էվոլյուցիայի պտուղն էր, վոր նրան մոտեցրեց պրոլետարիատին, բայց մահը խլեց բազմաչարչար պոետի կյանքի թելը. նա մեռավ չլսելով պրոլետարական հեղափոխության հաղթական շեփորների ձայնը: Միշտ մնալով հպարտ մենության մեջ:

Տարաբախտաբար, այս ականավոր բանաստեղծին թերագնահատելու տրադիցիան պահպանվել է դեռ յերկար ժամանակ, մինչև դեռ ակներև է բանաստեղծի կատարած նշանակալից դերը մեր դեռ ակներև է բանաստեղծի կատարած նշանակալից դերը մեր անցյալի գրականության մեջ, վոչ միայն իր դեմոկրատական մոտիվներով, այլ և բարձր ստեղծագործական կուլտուրայով, քնարական պոեզիայի նոր լեզվի ու բազմազան ձևերի մշակույթով: Խոշոր ժողովրդականություն են վայելել Ծատուրյանի լիրիկական բանաստեղծությունները, վորոնց խոր, մեղմ հուզականությունը, անկեղծ շունչը, քնարական բանաստեղծության կուլտուրան, կանոնավոր տաղաչափությունը, պատկերների հարստությունը նշանակալից դեր խաղացին հայ նոր պոեզիայի զարգացման գործում: Ժամանակակից քնարերգության լավագույն նմուշներն են պոետի մի շարք բանաստեղծությունները: Այդ նշանավոր բանաստեղծություններից մեկն է «Մի լար, բլբուլ»-ը:

Մի՛ լար, բլբո՛ւլ, քեզ մի տանջիր,
Վոր փոքրիկն անիրավ
Վարդդ սիրուն, վարդդ կարմիր
Թրփից պոկե՜ց ու տարա՜վ...

Կանցնեն որեր... կրգա կրկին
Մի նո՛ր գարուն վարդաբեր.

Ցեվ մռռացած քո վիշտը ինն,
Նորից կերգես վարդին սեր:

Ցերգչի համար գարուն չի՛ գա,
Վո՛չ նա նոր վարդ կրսիրե.
Նա պետք է լա, պետք է սրգա,
Մինչ հավիտյան կըլռե...

Բանաստեղծության զեղեցիկ պատկերների, լեզվի պարզության, զեղեցկության ու ժողովրդականության հետ զուգակցում է մեղմ, խոր լիրիկան, վոր շնչավորում է այդ ստեղծագործությունը: Նոր գարունը անհատապաշտի սիրո անուրջների մեղեդին չե, այլ պոետի հասարակական իղձերի նոր գարունը: Ահա թե ինչու «գարուն չի գա» պոետի համար և նրա լիրիկան տոգորված է մեղմ թախիծով: Այդպիսի վառ լիրիկական շունչ ունի պոետի «Ա՛յ վարդ, լսիր աղաչանքիս» բանաստեղծությունը:

Ա՛յ վարդ, լսի՛ր աղաչանքիս,
Թո՛ւյլ տուր թփից քեզ քաղեմ,
Ցեվ քեզանով սիրած կուսիս
Փափուկ կուրծքը զարդարեմ:

Մի՛ վախենար, նորա կրծքին
Ձեռ թառամիլ, քնքո՛ւյշ վարդ.
Այնտեղ մտատ կրծքի տակին
Կյանքի աղբյուր կա առաս...

Վորպիսի մեղմ հուզականություն կա այս զեղեցիկ տողերի մեջ, վորոնք քնարական պոեզիայի զոդարիկ նմուշ են: Ցերկու սեղմ քառյակի մեջ պոետը ծավալել է մարդկային սիրո թեման, վոր կյանքի աղբյուրն է, կուսյի սերը, վորից աճում են մարդկային կյանքի վարդերը: Ալեքսանդր Ծատուրյանի պոեզիայի մեջ նշանակալից տեղ են գրավում մարդկային սիրո յերգերը, վորոնց մեջ ջերմ մանկական քնքշանք կա:

Բանաստեղծի պոեզիային հատուկ չեն ուժեղ կրքերն ու դրամատիզմ, նրա բողոքը հուզում է իր լիրիզմով: Այս խնդրում պոետն ավելի շատ աշակերտել է Նադսոնին, քան Լերմոնտովին, վորի յերգերում արտահայտվում է նրա փոթորկալից մուսան և ուժեղ կրքերի հորդ հորձանքը: Սակայն բանաստեղծն իր լիրիկայի մեջ հավատարիմ է մնում իր ուխտին: Նրա լիրիկան

վաստակի յերգերի լիրիկան է: Այդ զեղեցիկ լիրիկական բանաստեղծություններից մեկն է նաև «Նավավար»-ը:

Մանուկ որից շա՜տ եմ տեսել
Ցե՛վ փոթորիկ և՛ աղեհ.
Ծովն է միշտ ինձ որոր ասել.
Նո՜ր չեմ ծանոթ ծովի հեհ:

Կյանքը լավ է.. բայց ի՞նչ արած...
Համ եղ մանից ի՞նչ փախչեմ...
Ծովն է տալիս մեզ կյանք ու հաց,
Ծովի տակն ել կրհանգչեմ...»

Ասեց, շարժեց նա թիակներ
Ցեվ բարձրաձայն յերգելով,
Քա՛ջ սլացավ ծովի խորքեր,
Սեվ ալիքներ ճեղքելով...

Բանաստեղծի «Նավավարը» ժողովրդի գավակն է, վորին հատուկ է մարդկային խիզախությունը, վոր այդ զեղեցիկ լիրիկական բանաստեղծության աղբյուրն է: Դա սեր փնտռող արկածալից յերիտասարդի իդիլիան չե, վոր հանձնում է իրեն փոթորկալից ալիքներին՝ սիրուհու կզգին հասնելու համար, այլ կյանքի չարքաշ վորդու խիզախ վոգեկոչումը, վոր ծով է դուրս յեկել մի կտոր հացի համար, վորին «կյանք ու հաց է տալիս ծովը»: Ծատուրյանի դրամատիզմն անգամ արտահայտվում է խոր հուզականության մեջ: Բանաստեղծի զեղեցիկ լիրիկական ստեղծագործությունները են «Գետակ», «Գարնան անձրև», «Պոետին», «Ցերկու ալիք», «Ղրիմի ալրոմից» և մի շարք այլ բանաստեղծություններ, վորոնք հայ պոեզիայի զարգացման գործում նշանակալից դեր խաղացին: Ահա այդ է, վոր անտես է արվել, արհամարհվել և բուրժուական գրականագիտության կողմից՝ անցյալում: Պատահական չե, վոր բանաստեղծին հալածել են ժողովրդի թշնամի Պ. Մակինցյանը և դաշնակ Նիկոլ Աղբալյանը:

Խորհրդային յերջանիկ ժողովուրդը, վոր գնահատում է մարդկության անցյալի կուլտուրան, յելակետ ունենալով ԼԵՆԻՆԻ—ՍՏԱԼԻՆԻ ուսմունքը՝. անցյալի կուլտուրայի և նրա դեմոկրատական ժառանգության մասին, ըստ արժանավույն գնահատում է հայ ականավոր դեմոկրատ հեղինակին:

Ալեքսանդր Ծատուրյանը մեկն է այն տաղանդավոր պոետ-

ներից, վորի պոեզիան մեզ համար խոշոր գրական-պատմական արժեք է, նրա յերկերի հրատարակությունը պատմության փոշուց փրկում է արժեքավոր և դեմոկրատ մի հեղինակի, վոր նշանակալից ծառայություն է մատուցել մեր գրականությանը։

Պատ. խմբագիր՝ Ն. Զարյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Ալիքանյան
Սրբագրիչ՝ Ս. Շահբաղյան

Գլավլիտի լիազոր՝ Դ. 3645 Հրատ. № 4564.
Գատվեր 331. Տիրաժ 3000.
Թուղթ 62×94. Տպագր. 1 3/4 մամ.
Մեկ մամ. 38,400 նշան. Հեղինակ. 1 1/4 մամ.
Հանձնված է արտադրության 28 մարտի 1938 թ.
Ստորագրված է տպագրության համար 5 հունիսի 1938 թ.

Գետհրատի I տպարան, Յերևան, Լենինի 65

ԳԻՆԸ 90 կ.

А. МКРТЧЯН

Александр Цатурян

Гиз Арм. ССР, Ереван, 1938 г.

«Ազգային գրադարան»
NL0382230

67.410